ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 դեկտեմբերի 2023 թ. թիվ 339 –Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՎ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ ԱՄՍԻՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հունվարի 25-ի թիվ 59 որոշման 1-ին կետի պահանջներով, ի կատարումն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ ԳՍ/15.2/37049-2023 հանձնարարականի՝ մարզի վիճակագրական մարմիններին աջակցություն ցուցաբերելու նպատակով

ո ր ո շ ու մ եմ.

1. Ստեղծել 2024 թվականի հունվարի 1-ի դրությամբ գյուղատնտեսական կենդանիների համատարած հաշվառման աշխատանքները կազմակերպող և անցկացնող համատեղ հանձնաժողով հետևյալ կազմով.

Վ.Սուքոյան	-	Հանձնաժողովի նախագահ, մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ
Ա.Աչինյան	-	ՀՀ ՎԿ Տավուշի մարզային վարչության պետ
Ա.Ամիրխանյան	-	մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ
Կ.Մկրտչյան	-	ՀՀ ՎԿ Տավուշի մարզային վարչության ամփոփ և տարածքային վիճակագրության բաժնի ավագ մասնագետ /Դիլիջան/
Գ.Վիրաբյան	-	ՀՀ ՎԿ Տավուշի մարզային վարչության ամփոփ և տարածքային վիճակագրության բաժնի ավագ մասնագետ /Բերդ/
Ա.Խաչատրյան	-	ՀՀ ՎԿ Տավուշի մարզային վարչության ամփոփ և տարածքային վիճակագրության բաժնի ավագ մասնագետ /Իջևան/
Ն.Հարությունյան	-	ՀՀ ՎԿ Տավուշի մարզային վարչության ամփոփ և տարածքային վիճակագրության բաժնի ավագ մասնագետ /Նոյեմբերյան/

2. Հանձնարարել հանձնաժողովին /նախագահ Վ.Սուքոյան/ 2024 թվականի հունվար ամսին մարզում անցկացնել անասունների հաշվառում և արդյունքների մասին տեղեկատվություն ներկայացնել մարզպետին:

3. Համայնքների ղեկավարներին՝ ստեղծել գյուղատնտեսական կենդանիների համատարած հաշվառում անցկացնող տեղական հանձնաժողովներ՝ ընդգրկելով համայնքների անասնաբույժներին:

4. Որոշման կատարման հսկողությունը դնել մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Վ.Սուքոյանի վրա:

Հ. ՂԱԼՈՒՄՅԱՆ

08.12.2023

X

2023թ. դեկտեմբերի 8
Իջևան